Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 348 - Ա
որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԾՎԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ոռոգման ջրագծի և 2 պոմպով պոմպակայանի կառուցման միջոցով նպաստել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրում գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման ընդլայնմանը և գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Երևանի Ռոտարի Ակումբ «Ինթերնեյշնլ»» բարեգործական հասարակական կազմակերպություն (հասցե՝ քաղաք Երևան, Վ. Վաղարշյան 24, բն. 75, ՀՎՀՀ՝ 02708338) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Երևանի Ռոտարի Ակումբ «Ինթերնեյշնլ»» բարեգործական հասարակական կազմակերպություն (հասցե՝ քաղաք Երևան, Վ. Վաղարշյան 24, բն. 75, ՀՎՀՀ՝ 02708338) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայր, բնագավառը՝ գյուղատնտեսություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 71,000,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2026 թվականի հունիսի 20-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրում ոռոգման ջրագծի և 2 պոմպով պոմպակայանի կառուցում, նախատեսվում է |

| | | |
|---|---|---|
| | | իրականացնել 2026 թվականի հունիսի 20-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 71,000,000 դրամի չափով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ոռոգման ջրագծի և 2 պոմպով պոմպակայանի կառուցման և փորձարկման աշխատանքների իրականացում՝ 71,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայր, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե, «Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերություն: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ, ինչպես նաև ծրագիրը կլինի Երևանի Ռոտարի Ակումբ «Ինթերնեյշնլ» բարեգործական հասարակական կազմակերպություն խորհրդի մշտադիտարկման ներքո, որին կներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

12.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ